

ՏԱՐՈՆ ԳԼԱԿ

ԳԵՏԻ ԱՓԻՆ

բանաստեղծություններ

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19-1 Գլակ
ԳՄԴ 84 (5Հ)-5
Գ 624

Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Գլակ Տարոն

Գ 624 Գեոի ափին: Բանաստեղծություններ / Տ. Գլակ. -
Եր.: Արմավ, 2017. - 80 էջ:

Գրքում զետեղված բանաստեղծությունները պատկերում են բանաստեղծի անսահման սերն առ Հայրենիք, առ մարդը և բնությունը: Մեղմ ու քնարական շնչով բանաստեղծական պատկերները երբեմն ընդմիջարկվում են հեղինակի խռովահույզ ցասումով: Ընդհանուր առմամբ Գլակի պոեզիային բնորոշ են կոնտրաստային լուծումները:

ՀՏԴ 821.19-1 Գլակ
ԳՄԴ 84 (5Հ)-5

ISBN 978-9939-863-60-3

© Տարոն Գլակ, 2017
© «Արմավ», 2017

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ՝ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի ընթերցող, մի՛ զարմացիր, որ քեզ այսպես եմ դիմում, քանի որ այն պահից, երբ դու վերցրեցիր այս գիրքը, հետաքրքրվեցիր նրանով և որոշեցիր շոշափել գրքի ոգին՝ այդ պահին իմ ու քո միջև հեռավորությունն անհետացավ: Այդ պահից սկսած կարևոր չէ մեր գտնվելու վայրը: Քո ձեռքերում կլինի իմ կյանքը և ես կզգամ, թե ինչպես ես դու կարդում ամեն մի տողը:

ՏԱՐՈՆ ԳԼԱԿ

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

ԵՐԿԻՐ ԻՄ

Երկիր իմ, ավանդ, մնացիր մենակ՝
Ամնարդ մնացիր այս ամբոխի մեջ,
Խոսքով սիրեցին, հոգով ուրացան՝
Դու որբ մնացիր այս բազմության մեջ:

Երկիր իմ, քեզնից ոչինչ չմնաց,
Բայց դեռ սնում ես բազմությանը մեղկ,
Նրանք անկուշտ են՝ հացդ ուրացան,
Օտար մնացիր որդիներիդ մեջ:

Երկիր իմ, վշտի անախի բնօրրան,
Քեզ խինդ չբերեց բազմությունն այս հեզ,
Ատելությունը ցանեց ու անցավ,
Ատելությունը անցավ հացի տեղ:

Երկիր իմ, սիրո կարոտ ուրվական,
Դու դեռ շրջում ես հոգիների մեջ,
Մեռել ես սիրո կարոտից հիմա,
ԲԱՅՅ ՊԻՏԻ ՍԻՐՈՒՅՑ ՎԵՐՍՏԻՆ ԾՆՎԵՍ:

ԹՈՂ ՆՎԻՐԵՄ

Կյանքս մեկ է՝ մի օր կտամ,
Թող նվիրեմ քո քարերին,
Թեկուզ առանց շիրիմ մնամ՝
Անհայտ ձուլվեմ քո հողերին:

Կյանքս ոչինչ չարժե, եթե
Չմիանամ քո ձորերին,
Ես կմնամ ինձնից դժգոհ,
Թե չսիրվեմ քո ջրերից:

Եթե մահն է ինձ բաժանում
Ծաղիկ շոյող քո հովերից,
Կյանքս սրտանց քեզ եմ հանձնում
Ու գոհանում քո զովերից:

Ընդունիր այս երգը քնքուշ,
Սիրտդ բացիր իմ հայրենիք,
Դու իմ ներկա, իմ սուրբ, իմ հուշ,
Իմ երազանք, իմ գտնելիք:

Ես ամեն օր փնտրում եմ քեզ
Եվ վախենում կորցրնելուց,
Քո հագին միշտ մի նոր զգեստ,
Սակայն հոգիդ նույնն է մնում:

Կյանքս մեկ է՝ մի օր կտամ,
Թող նվիրեմ քո ձորերին,
Թեկուզ առանց շիրիմ մնամ՝
Անհայտ ձուլվեմ քո հողերին:

ԵՍ ԿԱՊՐԵՄ ԻՄ ԱՄՐՈՅ ԵՐԿՐՈՒՄ

Ստի մեջ կոփվել ես իմ հույս,
Հառնիր արևի շողերից,
Իմ երգող, երազող թռչուն
Մի՛ չվիր իմ տխուր երկրից:

Անհոգի կմախքի նման
Նայում եմ այս օրերը մեզ,
Վախենամ, թե այսպես գնա՝
Վերածվենք կմախքի և մենք:

Սգի մեջ խեղձացած իմ լույս,
Թափանցիր խավարի միջից,
Իմ երգող, երազող թռչուն
Մի՛ չվիր իմ տխուր երկրից:

Հեքիաթ էր, էլ հեքիաթ չկա՝
Փորձում է չարիքն իմ երկրին,
Թե թույլ ես, վեր կաց ու գնա՝
Ես կօգնեմ իմ ընկնող երկրին:

Ես կապրեմ իմ ամրոց երկրում,
Կտանեմ անցյալն ուսերիս,
Ներկան է ավաղ վշտացնում,
Բայց իմն է ներկան այս անխիղճ:

Ստի մեջ կոփվել ես իմ հույս,
Հառնիր արևի շողերից,
Սգի մեջ խեղձացած իմ լույս,
Թափանցիր խավարի միջից:

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Ինձ պես փոքրիկ, նվազ մեկին
Թույլատրում ես քեզ տրորել,
Մարդու նման կանգնել հողիդ
Ու երազել, ծլարձակել:

Մեծ է անշուշտ, մեծ է հոգիդ,
Դու ոչ ոքի չես անտեսում,
Ընդունում ես առանց դատի
Ու սրտաբավ տուն ես դառնում:

Եվ այդքանը բավ է երկիր,
Մնացյալը իմ պարտքն է քեզ,
Ես իմ ամբողջ կյանքը պիտի
Լուռ ու անխոս նվիրեմ քեզ:

ՀԱՅՐԵՆԻՔ

Հազար ծովից քամի սուրա՝
Դառնա ձամփիդ փոթորիկ,
Լսիր, երբեք չխեղձանաս
Իմ երազող հայրենիք:

Քամին իր հետ ախտեր բերի,
Օդիդ խառնի ուրիշ բույր,
Ջուրդ վկա՝ նա չի փոխի
Քո սրբացած համն անուշ:

Երգիդ խառնեն ուրիշ հնչյուն,
Ուրիշ սրտով խոսք ասեն,
Չի սրբանա նրանց լեզուն
Օտար երգն այդ անարվեստ:

Բանաստեղծիդ խոսքը լսիր՝
Խնդրանք որպես, աղաչանք.
Աստծու սիրուն մի խեղձացիր
Իմ հայրենիք դարապահ:

ՀԵՐՈՍ ՏՂԵՐՔ ԷԻՆ

Ջահել տղերք էին, ես չէի ձանաչում՝
Ինձ համար իրենց կյանքը զոհեցին,
Չապրրված երգ էին, քեզ չէին ձանաչում՝
Քեզ համար իրենց կյանքը զոհեցին:

Ինչ դառնություն է հոգիս կուտակում,
Ինչպե՞ս երազես գուժահոտ ժամին,
Ո՞ր մոր աչքերն են հիմա արցունքվում,
Ո՞ր մի եղբայրն է հարվածում պատին:

Սևաչյա մի քույր մազերն է փետում,
Խենթանում անուժ ու դողում ցավից,
Իր աչքի առաջ աչքերը եղբոր
Դեռ ժպիտներ են նվիրում կյանքին:

Ու չկան խոսքեր հոգին կազդուրող,
Հավատն է մարդու թուլանում անգամ,
Հերոս տղերք էին, մեզ չէին ձանաչում,
Բայց իրենց կյանքը տվին մեզ համար:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԸ

Հեշտ չէր կովելը այս լեռների մեջ՝
Հայր ծարավ չէր մարդկային արյան,
Կուզես անունը թշնամի դնել՝
Հեշտ չէ մորթելը թշնամուն անգամ:

Եվ դուք, որ պիտի ձեր հոգին քննեք,
Հասկանաք կյանքը ձեզ բաժին ընկած,
Երբեք զինվորին պիտի չամոտեսեք՝
Անթև զինվորը որբի է նման:

Կռիվն ավարտվեց ու ետ ենք եկել
Եվ ի՞նչ ենք տեսնում մեր աչքի դիմաց,
Անտեր թողնըված, անհաշիվ որբեր՝
Ասես հատուցում մեր գործի համար:

Մարդը ամենից գուցե առավել
Ափսոսանքից է վախենում հարկավ,
Ես՝ իբրև զինվոր, որ ողջ եմ եկել՝
Այդ ափսոսանքի ձանկերը ընկա:

Ինչ մանրութներ են կյանքը զարդարում՝
Անպտուղ հարցեր, վեձեր անիմաստ,
Իսկ, թե որտեղ են որբերը քնում՝
Ոչ ոք չզհիտի, չի հուզում մարդկանց:

Բայց հայիդյուն են «անարդար» Աստծուն,
Հարցերը քննում նրա գոյության,
Իսկ, թե ինչպես է երկիրը գոյում,
Ուն արյան գնով՝ չի հուզում մարդկանց:

Հեշտ չէր կռվելը այս լեռների մեջ՝
Հայը ծարավ չէր մարդկային արյան,
Դժվարը, սակայն, ապրելն է այսպես՝
Սեփական հողում՝ որբի պես լքված:

ՋԻՆՎՈՐԻՆ

Ու քերծում եմ տուփը ծխախոտի
Ու չեմ հասկանում՝ ինչ է կատարվում...
Տղաներ, որոնք անդարձ գնացին,
Որոնք տեղ գտան երկնականարում:

Հերոսության հետ վիշտն է մերձեցնում,
Ասես ընկերներ լինեն մանկության,
Եվ այս թախիծը տեղը չի զիջում՝
Ոստիկանի պես ձգում է շղթան:

Որքան ուզում ես տուփերը քերծիր,
Մարմինդ փորիր քո եղունգներով,
Կամ անձրևաչափ արցունք հորինիր,
Մեկ է, չե՛ս հաղթի քո արցունքներով:

Ու քերծում եմ տուփը ծխախոտի,
Կամացուկ երգ եմ հանկարծ նրմնջում.
Տղաներն այ՛ր, անդարձ գնացին,
Սակայն տեղ գտան երկնականարում:

ԱԼԻՔՆԵՐԸ ՉԵՆ
ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ

ԱՍՏՎԱԾ ԿԱՍԵՐ

Ես աշխարհ եմ բերել անկեղծության ոգուն,
Որ դուք իրար սիրեք ու ժպիտով շոյեք,
Դուք անտարբեր սակայն՝ ամենածին բարուն,
Մահակներով պիտի իրար գլուխ ջարդեք:

Ու տանջամահ եղած այն կենդանու մնան
Պիտի վերջում նայեք ձեզ ուղեկցող լույսին,
Մինչդեռ խաղաղ օրում ձեր խավարը գրկած
Թափառեցիք ձեր իսկ աղետների հույսին:

Ու չեք հոգնում, մարդիկ, ձեր հորինած կյանքից,
Աստվածային աչքով դուք չեք նայում նրան,
Հապա, ինչպե՞ս պիտի փրկվեք խղճի խայթից,
Որից չեք ազատվի մթնաշխարհում անգամ:

Ես հոգնում եմ ձեզնից, բարքից ձեր այլանդակ.
Ես՝ որ այս աշխարհում ամեն ինչ եմ տեսնում,
Տրորել եք բարին ու գետնել եք նրան,
Եվ անցողիկ կյանքում ձեր դժոխքն եք կերտում:

Ես բերեցի աշխարհ անկեղծության ոգուն,
Ես ձեզ հոգի տվի, սիրո կամուրջ դարձա.
Դուք չեք գտնի երբեք Քրիստոսի խոսքում
Ձեզ ավետված դաժան մահակների ձամփան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՅՈՂԻՆ՝ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՅ 3

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

ԵՐԿԻՐ ԻՄ 6
ԹՈՂ ՆՎԻՐԵՄ 7
ԵՍ ԿԱՊՐԵՄ ԻՄ ԱՄՐՈՅ ԵՐԿՐՈՒՄ 8
ՀԱՅՐԵՆԻՔԻՆ 9
ՀԱՅՐԵՆԻՔ 10
ՀԵՐՈՍ ՏՂԵՐՔ ԷԻՆ 11
ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԸ 12
ԶԻՆՎՈՐԻՆ 14

ԱԼԻՔՆԵՐԸ ՁԵՆ ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ

ԱՍՏՎԱԾ ԿԱՍԵՐ 16
ՔԵԶ ՊԵՍ ԵՍ ԷԼ ԶԳԻՏԵՄ 17
ՀԵՌԱՅՈՂ ԻՄ ՕՐ 18
ՀՈԳԻՆ 19
ՏՈՒՆ ՁԵՄ ԳՆԱ ԱՅՍ ԳԻՇԵՐ 20
ԾԵՐԱՆՈՅՈՒՄ 21
ԺԱՄԱՆԱԿ ՉԿԱ 22
ԴԺՎԱՐ Է 24
ՀԱՅԹՈՒԽԸ 25
ԱՆՏԱՌՈՒՄ 26
ԵՐԵՎԱՆ 27
ՈՉ ՈՔ ՁԻ ՀԱՍԿԱՆՈՒՄ ՀԻՄԱ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ 28
ՀԻՆ ՃՅՈՒՂԵՐԸ ԾԱՌԻ 30
ԻՄ ԽԵՂԿԱՏԱԿ ԸՆԿԵՐ 31
ՊՈՆՏԻՆ 32
ՎԵՐՔ 34
ԻՄ ԿՅԱՆՔԸ 35
ԺԱՄԵՐԸ ՓԱՄԱՆ ԴՌՆԵԴՈՒՌ 36
ՄԵՐ ԱԼՈՃԵՆԻՆ 37

ՇԱՏ Է ՀԱՅԻ ԴԱՐՆ ՈՒՇԱՆՈՒՄ	38
ՎԱՂՈՒՅ Է ՈՉԻՆՉ ՁԵՄ ԳՐԵԼ	39
ԵԿ ԴԱՏԱՐԿԵՆՔ ՏԱՌԱՊԱՆՔԻ ԹԱՄՆ ԱՆՀԱՄ	40
ԱՄՎԱԾ ՈՒ ՉԱՄՎԱԾ ԱՍԵԼԻՔ	41
ՀԱՎԱՏ	42
ԴՈՒ ՄԻՐԵՅԻՐ	43
ՋՐՈՒՅՅ ՋԱՆԳՎԻ ՀԵՏ	44
ՆԱՄԱԿՈՒՄ	45
ԵՄ Ո՞ՒՄ ՀԵՏ ԽՈՍԵՄ ԻՄ ՄՐՏԻ ՄԱՍԻՆ	46
— — ԻՆ	47
ՔԱՈՍ	48
Ա՛Խ, ԱՅՍ ԱՄԵՆԻՅ ԵՄ ՇԱՏ ԵՄ ՀՈԳՆՈՒՄ	50
ԻՄ ԵՐԱՄԸ ԹՌԱՎ	51
ԾԽՈՒՄ ԵՆ ՊԱՏԵՐԸ ԻՄ ՏԱՆ	52
ԱՐՏԻՍՏԸ	53
ԱՇԽԱՐՀՆ ԻՆՉՈՒ ԴԱՐՁԱՎ ԷՍՊԵՍ	54
ԵՄ Ո՞ՒՐ ԳՆԱՄ	56
ԻՄ ՎԵՐՋԻՆ ԵՐԳՆ ԷԼ ՇՈՒՏՈՎ ԿԼԻՆԻ	57
ՎԼԱԳԻՄԻՐ ՎԻՍՈՅԿԻՆ	58
ԿՆՈՋԸ	59
ՔԱՂԱՔ ԻՄ	60
ՀՐԱԶՅԱ ՍԱՐՈՒԽԱՆԻՆ	61
ՄԻՐԱՅԻՆ	62
ԻՆՁ ՀԱՆԳԻՍՏ ԹՈՂԵՔ	63
ՎԵՐՋԻՆ ՊԱՏԳԱՄ	64
ԳՈՐ	66

«ԴԵՊԻ ԼԻՃԸ» ԳՐՔԻՅ

ԽԵԼԱԳԱՐԻ ՊԵՍ ԴՈՒ ԴՈՒՐՍ ՎԱՋԵՅԻՐ	70
ԱՅՍՕՐ ՀԱՄԿԱՅԱ	71
ՄՏՔԵՐ ՓՆՏՐԵԼԻՍ	72
Ո՞ՒՐ Է ՄԻՔԻՐԸ... ՔՇԵՔ ԻՆՁ ՄԻՔԻՐ	73
ԴՆ, ԽԵՂԿԱՏԱԿ, ԽԵԼԱԳԱՐՎԻՐ	74
ՔՈ ԱՋՔԵՐՈՒՄ	75
ՁԵԳ հնձեմ ու քրտինք կաթի	76
ՀԵՌՎԻՅ ՍԱՐԻՆ ՆԱՅԵՅԻՆՔ	77

ՏԱՐՈՆ ԳԼԱԿ ԳԵՏԻ ԱՓԻՆ

ТАРОН ГЛАК НА БЕРЕГУ РЕКИ

*Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Ձևավորումը՝ Եվա Գևորգյանի*

*Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.5 ծ.կ.
Ծավալը՝ 5.0 տպ. մամուլ
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar
Գինը՝ պայմանագրային*



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru